քրիստոնէից պաշտպանելն և եկեղեցւոյ մէջ թալուիլն (ինչպէս առաջ յիշեցինք), երեւցընէ, որ թէ արտաքուստ չէր, ներքուստ իր հայրենի կրօնքը չէր ուրացեր։ Խորագէտ մարդ, զգաստ պաշտօնեայ, քաջ սպարապետ, փառաւոր իշխան և վզուրկ, նեցուկ պետութեան Եգիպտոսի, և զրեթէ վարիչ՝ 20 կամ աւելի տարի. բայց ոչ կատարեալ արիասիրտ. զի ոչ պարզահաւատ՝ առաջի մարդկան. զոնէ իր վերջի մտածութիւնն մեզի անյայտ, Աստուծոյ յայտնի։ Իր մահն հանդիպեցաւ յամին 1094. աշխարհօրէն ոչ միայն մեծ փառօք և համբաւով, այլ և յարգանօք և սիրով. որով՝ իր յաղթութեանց առաջնորդուած զօրականք՝ մէկէն իրեն տեղ հռչակեցին և նստուցին վզուրկ իր որդին, Շահնշահ Ապու'լ Խասիմ, որ հասարակօրէն յԱրաբաց Ալ–Ափտալ կամ Ափսալ կոչուի, الافضل شاهنشاه, և երեք խալիֆայից ատեն իբր 30 տարի վարեց իր մեծ իշխանութիւնը հօրը նման, նա և ըստ հաւատոց. բայց ոչ անոր պէս խաղաղ վախճան ունեցաւ, այլ սպանութեամբ, յամի 1122։ Մաքրիզի և ուրիշ Արաբացի պատմիչք շատ անգամ յիշեն զնա. իսկ Արուսահլ ի ստորագրելն ըզվանքն Թամվայիհ, որ ի հարաւակողման Ցուրայի, կ'ըսէ.